

2003թ. ՀՀ ԱՎԾ կողմից միջազգային համագործակցության շրջանակում իրականացված ծրագրերի ֆինանսական բաղադրիչի մասին

<i>Ծրագրի անվանումը</i>	<i>Իրականացման գործընթացը</i>
<p>SԱՍԻՍ-վիճակագրություն 4</p>	<p>1998թ. ապրիլի 22-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված «1997թ. հունիսի 30-ին ստորագրված SԱՍԻՍ-ի 1996թ. ծրագրի ֆինանսավորման հուշագրի» շրջանակում ՀՀ-ում վիճակագրության բարեփոխման համար 2000-2002թթ. տրամադրվել է 700,0 հազ.ԵՎԲ: Նշված ծրագիրը ՀՀ ԱՎԾ-ն իրականացրել է 2000թ.-ից: Ծրագրով նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ կատարված են 2002թ. վերջի դրությամբ: Ֆինանսական հոսքերի կառավարումը կատարել է Եվրամիության կողմից առաջադրված «ՍիէսԴե-կոմունիտե» կազմակերպությունը: ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից 2003թ.-ին ընդհանուր առմամբ, ծախսվել է 14873.2 հազ.դրամ:</p>
<p>«Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություն»</p>	<p>2000թ. օգոստոսի 25-ին ՀՀ ԱՎԾ-ի և «ՍԱԿԲՈ ինտերնեյշնլը» կազմակերպության միջև կնքված վիճակագրական համագործակցության պայմանագրի համաձայն, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսական օժանդակությամբ, իրականացվող ծրագրի բյուջեն կազմել է 303341 ԱՄՆ դոլար: Այս ծրագրի գծով ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից 2003թ.-ին իրականացված ծախսերը կազմել են 138.3 հազ.դրամ: Ծրագիրն ավարտված է:</p>
<p>«Սոցիալ-տնտեսական և առողջապահության վիճակագրության կայուն հաշվետվական ընթացակարգի զարգացման եռամյա ծրագիր»</p>	<p>2000–2003թ.թ ՀՀ ԱՎԾ-ի և ԱՄՆ ՊԱԴԿՈ/ՅուԷսԱյԻԴ-ի կազմակերպության միջև կնքված վիճակագրական համագործակցության ենթապայմանագրի, հաստատված աշխատանքային պլանի և խնդրո կարգերի համաձայն, ՀՀ ԱՎԾ արտաբյուջետային հաշվից վերը նշված ծրագրով իրականացված ծախսերը 2003թ.-ին կազմել են 8886.2 հազ. դրամ:</p>

<i>Ծրագրի անվանումը</i>	<i>Իրականացման գործընթացը</i>
«Սոցիալական պաշտպան-վածության ամրապնդում , ՀՀ ընտանեկան նպաստա-բուհերի գնահատում»	Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի միջոցներից 2003թ-ին արտաբյուջետային հաշվից իրականացված ծախսերը կազմել են 209.5 հազ. դրամ: Ծրագիրն ավարտված է:
«Սոցիալական վիճակագրությունը Հայաստանում»	Շվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության (ՄԻԳ-Ա)–ի կողմից 2003թ.-ին ֆինանսավորվել է 6290.1հազ. դրամ: 2003թ.-ին արտաբյուջետային հաշվից իրականացված ծախսերը կազմել են 4363.1հազ. դրամ: